ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«22» «Մարտի» 2021թ. № 86-Հ

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿԵԲԵՐ ՔՎԱՐՑԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման համար 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N Հ/Ա-2020/117 գրությամբ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացված արդյունաբերական նպատակով ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը և հայտին կից փաստաթղթերի փաթեթը, ինչպես նաև 2021 թվականի հունվարի 27-ի NՀ/Ա-2021/02 գրությամբ ջրօգտագործման թույլտվության ստացման լրամշակված հայտի և հայտին կցված լրամշակված փաստաթղթերի փաթեթը, պարզվել է, որ Ընկերությունը նախատեսում է ջրառն իրականացնել Վայոց ձորի մարզի վարչական տարածքում Արփա գետից 1.284595 մլն. մ^3 /տարի, 3568.32 մ^3/օր, 41.3 լ/վ ջրաքանակներով:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության «Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» 2016 թվականի մարտի 31-ի N 338-Ն որոշման՝ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում կանխատեսվող ջրառաջարկը գնահատվում է՝ հաշվի առնելով գետավազաններում տնտեսական զարգացման միտումները և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա: Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի ջրառաջարկի և ջրապահանջարկի վերլուծությունը տրվում է բազիսային և լավատեսական սցենարներով՝ ըստ ջրօգտագործման ոլորտների:

Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի գետավազաններում 2014-2021 թվականների համար ջրառաջարկի կանխատեսվող փոփոխությունը ներկայացված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N338-Ն

որոշման հավելված 1-ի աղյուսակ 2-ում, ինչի համաձայն Արփայի գետային հոսքը 2014 թվականին կազմել է 679.8 մլն. մ^3, իսկ 2021 թվականին այն կկազմի 648.7 մլն.մ^3: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N338-Ն որոշման աղյուսակ 2-ի՝ մինչև 2021 թվականն Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում ջրառաջարկը կանխատեսվող կլիմայի փոփոխության պայմաններում կնվազի մոտ 2.3 %-ով կամ 29.2 մլն.մ^3-ով: Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում մինչև 2021 թվականը ջրառաջարկը և ջրապահանջարկը մնում են նույնը՝ 1060.4 մլն. մ^3, իսկ պրոֆիցիտը(ջրառաջարկի և ջրապահանջարկի տարբերությունը) կնվազի մոտ 12.5 %-ով՝ 231.7 մլն.մ^3-ից հասնելով 202.8 մլն.մ^3:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N338-Ն որոշմամբ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում կանխատեսվող կլիմայի փոփոխության պայմաններում 2021թվականի ընթացքում Արփա գետի ավազանում գետային հոսքը կնվազի, նաև հիմք ընդունելով, որ մինչև 2021թվականը Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում ջրառաջարկը և ջրապահանջարկը մնում են նույնը, այնինչ պրոֆիցիտը (ջրառաջարկի և ջրապահանջարկի տարբերությունը) կնվազի մոտ 12.5 %-ով, հետևաբար Ընկերության կողմից ջրօգտագործման թույլտվության ստացման լրամշակված հայտով Արփա գետից ջրառ իրականացնելու համար ներկայացված 1.284595 մլն. մ^3/տարի ջրապահանջարկը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի «Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N338-Ն որոշմամբ 2019-2021 թվականների համար արդյունաբերական նպատակով Արփա գետից ջրառ իրականացնելու համար սահմանված ջրօգտագործման 0.08-0.09 մլն. մ^3 սահմանաչափը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 30.1-րդ հոդվածի 1-ին կետի՝ ջրօգտագործման թույլտվության ստացման հայտերը մերժվում են, եթե՝ «1) դրանով պահանջվող ջրօգտագործման թույլտվությունը չի համապատասխանում սույն օրենսգրքին կամ ջրի ազգային քաղաքականությանը կամ ջրի ազգային ծրագրին կամ ջրավազանային կառավարման պլաններին կամ դրանց առնչվող նորմատիվ իրավական այլ ակտերին:»:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 30.1-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի «Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N 338-Ն որոշումով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Մերժել՝ «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N Հ/Ա-2020/117 և 2021 թվականի հունվարի 27-ի N Հ/Ա-2021/02 գրություններով շրջակա միջավայրի նախարարություն ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում արդյունաբերական նպատակով Արփա գետից 1.284595 մլն. մ^3/տարի, 3568.32 մ^3/օր, 41.3 լ/վ ջրաձավալով ջրառ իրականացնելու համար ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ շրջակա միջավայրի նախարարություն, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում:

ՆԱԽԱՐԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

3/22/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«22» մարտի 2021 թ.

ք.Երևան